

արժ. Գրիգոր Քահանայ Խորասանձեանի յորդորանքով, կտակել է յօգուտ ազգային հաստատութիւնների 24.100 մանէթ։ Կտակը հաստատված է մայիսի 5ին և գումարը զրված է արքունի զրամանոցի Օղէսսայի բաժանման մէջ։ Նոյն 24.100 մանէթից 8000 մ. կտակված է Էջմիածնի Գէորգեան ձեմարանին, 6100 մ. Օղէսսայի հայ երկսեռ դպրոցներին, 2000 մ. Քիշների հայ դպրոցներին, 2000 մ. Ազէրմանի հայ դպրոցներին, 2000 մ. Գրիգորիպօլի հայ դպրոցներին, 2000 մ. Տուլչայի հայ դպրոցներին և 2000 մ. Սիլիստրայի հայ դպրոցներին։ Դրամանոցի վկայագրեր նոյն ինքն կտակօղի և իւր կնոջ մահից յետոյ Էջմիածնի Սինօղի մէջ պիտի պահպին։ Դրամագլուխը անշարժ պիտի մնայ դրամանոցում, և միայն տոկոսիք պիտի ստանան։ Դրամանոցից տոկոսիքը պիտի ստանան Օղէսսայի գործակալ քահանան և եկեղեցու երեսփոխանը և ուղարկեն նշանակված տեղերն։ Կնոջ կենդանութեամբ բոլոր տոկոսիքը պիտի ստանայ կտակօղի կինը, իսկ նշանակված տեղերը պիտի ստանան կնոջ մահից յետոյ։ Վեհափառ Հայրապետը միիմարփելով այսպիսի հայրենասիրական ջերմեռանդ և պատուական զգացմունքով և օրհնելով բարեսէր մեծ. պ. Գրիգոր Սէրէբրեաննիկեանին, բարեհաճեց վարձատրել յորդորօղ արժ. Գրիգոր Քահանայ Խորասանձեանին կերպասեայ ծաղկեայ փիլոնով։

Կհաւատանք, որ մեր ազգի մէջ կգտնվին զանազան տեղերն ազգասէր և պատուական Գրիգոր Սէրէբրեաննիկեանի օրինակին հետեւել յօժարօջներնցանկալի կլինէր որ արժ. քահանաներն աշխատ լինին նոցա յորդորել և բարեգործութեան նախանձելի ճանապարհներ ցոյց տան, որով ամեն հայասէր անձի երախտագիտութիւն վաստակելով, բարի անուն ժառանգելու են թէ բարերար կտակօղներն և թէ յորդորօղ քահանաներն, ինչպէս աչա այս ներկայ գէպքում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵԲ:

Անգլիայում դպրոցների եւ կոլեջների մեծագոյն մասի ուսուցչապետները, նոյնպէս եւ մասնաւոր անձներ, հրատարակեցին հետեւեալ ընդհանուր ուղերծ յունական լեզու պարտադիր անելու դէմ. «Մենք ներքոյ ստորագրողներս, հասկանալով որ նոր կարգադրութեան պատճառով, որի գորութեամբ Կէմբրիջի համալսարան մոնել ցանկացող իւրաքանչիւր կանդիդատից կապահանջմի յունական լեզուի դիտութիւն, բազմաթիւ ընդունակ եւ ջանասէր ուսանողներ պիտի զրկվին համալսարանական կրթութեան արտօնութիւններից, խոնարհաբար կիմնդրենք համալսարանի վարչութիւնը ի միտ առնել եւ նոր միջոցներ գտնել, որով բարձրագոյն ուսումնական աստիճաններ պտող անձներ կարողանային ազատվել յունական լեզուի բննութիւն տալու պարտից»։ (The Educ. Times, № 213):